Թէոդորոս Պատրիարք և Ղազար վարդապետ՝ առ Փոխանորդն Պօղոս վարդապետ, Թերեւս կարասցեն ազատել զնոսա 'ի ձեռաց նորին՝ այլ չեղեւ հնար, զի մնաց երկար ժամանակ 'ի ձեռս այլազգեաց. զորս յետոյ բազում աշխատութեամբ և ծախիւք հազիւ կարացին ազատել. 'ի սոյն կարգի էր և առնն յոր նստէր Հաննա Տիմեան իբր փոխ Հիւպատոս Անգղիոյ։

Նաւ ուխտաւորացն Հայոց մեկնեալ 'ի Կոստանդինուպօլսոյ՝ և հասեալ 'ի կողմանս Շամ Թարապուլուս քաղաքի՝ հանդիպեցաւ փոթորկի մեծի, եւ վտանգեալ նաւն անկաւ 'ի ցամաք, և հեղձան 'ի ծով անդր անձինք 36 յուխտաւորաց, և եղեւ վնաս մեծ և աւիթ վնասու, սուգ և տրտմութիւն Թէոդորոս Պատրիարքի և միաբանացն Երուսաղէմի, և վիշտ անհնարին մերձաւորաց և ընտանեաց ծովամոյն եղելոց։ Ի սոյն նաւի էր և մայր Արքունի ճարտարապետ Գրիգոր Գալֆայի՝ Խաթուն անուն, և հիւրընկալ վարդապետ, բայց սոքա անվնաս զերծան 'ի վտանգէ (1813)։

Եհան Արքայ արտաքս զհրովարտակն վաւերացեալ Կայսերական վերնագրով (Խաթթի Շէրիֆ) (1812· 'ի 13 Դեկտեմբերի) յետ մնալոյ 'ի ներքս ամիսս 18, և առաքեաց 'ի Դուռն տալ զմին Հայոց և զմիւսն Յունաց։ Սակայն հրովարտակքն արգելան անդ ամսօրեայ ժամանակաւ, և բազում անցք անցին զգլխով նոցին՝ զի Թերեւս խափանեսցին։ Եւ ապա կոչեալ զՀայս առանձին և զՅոյնս առանձին՝ ետուն զհրովարտակն ('ի 13 Յունվարի) երկոքեանն դրեալ 'ի մի եւ նոյն միտս, զի մին ընթեռնլով՝ իմանի և միւսն։

Ապա ուրախութեամբ օրհնեցին Հայք զԱստուած եւ զԱրքայն արդարասէր և զՏէրութիւն նորին, և զամենայն աշխատաւորս եւ զերախտաւորս ազգին, որոց անուանքն գրեալ են 'ի դպրութեան կենաց։ Այս երկոքին հրովարտակքն արձանագրեցան յամենայն Դիւանս Արքունեաց և 'ի դատարանս Կոստանդինուպօլսոյ ըստ հրամանի Արքային· և ապա զարդարեցին զայն ոսկենկար ծաղկով՝ և հանեալ զօրինակս նորին առաքեցին 'ի հեռաւոր յայլ և այլ տեղիս՝ և զմի պատճէն յԵգիպտոս, յուրախութիւն